


5036


88

Բ. Վ. ՍՏԱԼԻՆ

(ԿԵՆՏՐԱԼԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԱԿՏԱՐԿ)

3KП14  
h-70





3K019 up.  
1-70

09 AUG 2005

1 DEC 2009

# Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆՍՐԿ)

~~3000~~  
~~13944~~



29.04.2013

5036

5685-88



6302  
39

И. В. СТАЛИН

(Краткий биографический очерк)

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1939

Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը ծնվել է 1879 թվին Գորի քաղաքում (Վրաստան), Թբիլիսիի (Թիֆլիսի) կոչկեղենի գործարանի կոչկակար-բանվորի ընտանիքում: 1894 թվի մայիսին Ստալինն ավարտել է հոգևոր ուսումնարանը և նույն թվին ընդունվել Թբիլիսիի հոգևոր սեմինարիան: 1894 թվի աշնանը Ստալինը մտնում է մարքսիստական անլեզալ խմբակը և ուսումնասիրում Մարքսի «Կապիտալ»-ը: 1897 թվին, տասնութամյա պատանի հասակում, ընկեր Ստալինը կանգնած էր սեմինարիայի մարքսիստական հեղափոխական խմբակների ղրուխ:

1898 թվին ընկեր Ստալինը մտնում է մարքսիստական սոցիալ-դեմոկրատական «Մեսամե դասի» կազմակերպության մեջ: Ընկեր Ստալինի ղալով այդ կազմակերպության մեջ ծնունդ է առնում և ձևակերպվում է մարքսիստական հեղափոխական խումբը-Ի. Ստալին, Ա. Ծուլուկիձե, Լադո Կեցիկովելի: Եկոնոմիստների և «լեզալ մարքսիստները» դեմ մղած վճռական պայքարում այդ հեղափոխական-մարքսիստական խումբը պաշտպանում էր անլեզալ թերթ



ստեղծելու անհրաժեշտութիւնը հեղափոխական մարքսիզմի պրոպագանդայի և տարածման համար, ինքնակալութեան և կապիտալիզմի դեմ քաղաքական ազիտացիա մղելու համար, բանվոր դասակարգի քաղաքական պայքարը կազմակերպելու և խնկական հեղափոխական պրոլետարական կուսակցութիւն ստեղծելու համար: Ստալինի խումբը նաև պահանջում էր խրմբակներում բանվորների հետ տարվող պարամպունքներին անցնել մասսայական ազիտացիայի, բացահայտ պայքարի՝ ինքնակալութեան դեմ: Խումբն առաջ քաշեց տնտեսական դործադուլները քաղաքական ուկսերի վրա փոխադրելու խնդիրը, բանվորների ցույց կազմակերպելու և անցկացնելու խնդիրը, հանուն ինքնակալութեան տապալման մղելիք քաղաքական պայքարի համար փողոցն անելի լայնորեն ուղտադործելու խնդիրը: Այդ խումբը հանդիսացավ Վրաստանի և Անդր-կովկասի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի սաղմը:

Այդ ժամանակաշրջանում ընկեր Ստալինը լարված աշխատանք էր տանում մասսաների մեջ, անխոնջ կերպով աշխատում էր բանվորական խմբակներում՝ դրում հեղափոխական թուուցիկներ, կազմակերպում բանվորների դործադուլներ ու ցույցեր: 1900 թվին Թբիլիսիում տեղի ունեցած բանվորների մայիամեկյան քաղաքական ցույցին հետո ընկեր Ստալինը թաղանթում և և պրոֆեսիոնալ-հեղափոխականի անլեզալ դրութեան անցնում:

Ընկեր Ստալինը հանդիսանում է լենինյան-խակրայական կազմակերպութեան հիմնադիրը, ամբողջ Անդրկովկասի բանվորական շարժման ղեկավարներից

մեկը: Ընկ. Ստալինի նախաձեռնութեամբ 1901 թվին հրատարակեց սոցիալ-դեմոկրատական առաջին կոնֆերենցիան Թբիլիսիում, վորտեղ ընտրվեց լենինյան-խակրայական ուղղութեան ՌՄԴԲԿ Թբիլիսիի առաջին կոմիտեն, վորի կազմի մեջ մտավ ընկեր Ստալինը: 1901 թվին Կեցիսովելին, Ստալինի ցուցումներով և ուղտութեամբ, Բազում կազմակերպում է ընդհատակյա մի տպարան, վորտեղ տպագրվում է լենինյան-խակրայական ղեկանութիւնը:

1901 թվի վերջին ընկեր Ստալինը տեղափոխվում է Բաթումի: Այստեղ նա կապվում է առաջավոր բանվորների հետ և բանվորական սոցիալ-դեմոկրատական խմբակներ կազմակերպում Բաթումիի մի շարք խոշոր ձեռնարկութիւններում: 1901 թ. ղեկտեմբերին կայացած այդ խմբակների ներկայացուցիչներին ժողովում ձևակերպվում է Բաթումիի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնը: Այդ նույն ժողովում առանձնացվեց ղեկավար կուսակցական խումբ ընկեր Ստալինի ղլխավորութեամբ, վորը (խումբը) վրաստերեն լենինյան-խակրայական ուղղութեան ՌՄԴԲԿ Բաթումիի կոմիտեյի դերն էր խաղում: 1902 թվի հունվարին և փետրվարին ընկեր Ստալինի ղեկավարութեամբ աշխատում էլին 11 սոցիալ-դեմոկրատական բանվորական խմբակներ, վորտեղ ընդդրվում էլին Բաթումիի կարևորագույն դործարանները (Ռոտշիլդի, Սիդերի-գիսի, Մանթաշիվի և ուր. դործարանները):

Ընկեր Ստալինը ղեկավարում էր մի շարք դործադուլներ ու բանթոյներ: Նրա ղեկավարութեամբ կազմակերպվեց Բաթումիում առաջին անգամ տեղի ունեցող Մանթաշիվի դործարանի բանվորների քաղաքա-



կան դործադուլը, վորը վերջացավ բանվորների հազ-  
թանակով :

1902 թվի մարտին ընկեր Ստալինի ղեկավարու-  
թյամբ Բաթումիում տեղի ունեցավ բանվորների վեց-  
հազարանոց դեմոնստրացիան : Այդ դեմոնստրացիան  
դնդակիծվեց ցարական զորքերի կողմից : Ձերբակալ-  
վեցին և Բաթումիից արտաքսվեցին մոտ 500 հեղափո-  
խական բանվորներ : Մյուս օրն ընկեր Ստալինը կազ-  
մակերպեց բողոքի ազդու դեմոնստրացիա, պահանջե-  
լով ազատ արձակել ձերբակալված բանվորներին : Այդ  
նույն ժամանակաշրջանում ընկեր Ստալինն ընդհատա-  
կյա աշխատանք և տանում Գուբրյայի, Մինդրեկայի,  
Իմերեթիայի բանվորների և դուռապանների մեջ, այդ  
շրջաններում տարածելով թուուցիկներ, վորոնք բան-  
վորներին ու դուռապաններին կոչ ելին անում հեղափո-  
խական պայքարի յեղնել ցարիկովը տապալելու համար :

1902 թվի ապրիլին ընկեր Ստալինին ձերբակալե-  
ցին և Բաթումիի բանտը դրին : Բանտում նրան հաջող-  
վում և կապ հաստատել սոցիալ-դեմոկրատական կազ-  
մակերպության ազատ մնացած անդամների հետ և  
ուղղություն տալ նրանց աշխատանքին : Բաթումիի  
բանտում ընկեր Ստալինը մնում և 1902 թվի ապրիլի  
5-ից մինչև 1903 թվի ապրիլի 19-ը, այնուհետև նրան  
տեղափոխում են Քուլթայիսի բանտը : Քուլթայիսի բան-  
տում ընկեր Ստալինը կալանավորների մեջ լենինյան-  
խկրայական դադավարների սլոտպազանդա յե մզում,  
մերկացնելով «Մեռած դասի»-ի մեծամասնության  
սպորտունիկովը : Բանտում ընկեր Ստալինն իմանում  
և կուսակցության II համագումարում բուլչեիկների և  
մենչեիկների միջև տեղի ունեցած պայքարի մասին և  
վճարար հարում և բուլչեիկներին :

1903 թվի նոյեմբերին ընկեր Ստալինին Քուլթայի-  
սի բանտից տեղափոխում են նորից Բաթումիի բանտը  
և նոյեմբերի վերջին յերեք ասբով արտորում են Արև-  
վելյան Սիրեր, Իրկուսակի նահանգի Նովայա Ուզոս  
դյուղը : Մահայն 1904 թվի հունվարին նա փախչում և  
արտորից և վերադառնում սկզբում Բաթումի, իսկ  
այնուհետև տեղափոխում և Թրիլիսի :

Արտորից վերադառնալուց հետո ընկեր Ստալինը  
կանդնում և Անդրկովկասի բուլչեիկյան կազմակերպու-  
թյանների դյուխ : Ընկեր Ստալինի 1904—1905 թ. թ.  
ժամանակաշրջանում հեղափոխական դործունեյու-  
թյունն ընթանում և մենչեիկովի դեմ մղած կոտորի  
պայքարի և բանվորական մասսաներին բուլչեիկների  
կողմը դրավելու նշանաբանի տակ : 1904 թվի վերջում  
Թրիլիսիում ձեռակերպվում և ՌՄԳԿ բուլչեիկյան կազ-  
մակերպությունն ընկեր Ստալինի ղլխավորությամբ :  
Ընկեր Ստալինը սիստեմատիկորար շրջադայում և  
Անդրկովկասի շրջանները (Բաթումի, Թրիլիսի, Չիա-  
տուրի, Քուլթայիսի, Բազու), բանտվոր և մամուլի  
միջոցով պայքար մղելով մենչեիկների ու հաշտվողա-  
կանների դեմ, ինչպես և եսերների, անարխիստների  
ու դանազան տեսակ նացիոնալիստների դեմ : Ստալինը  
կանդնում և ՌՄԳԿ կովկասյան միութենական կոմի-  
տեյի դյուխ և ամենաակտիվ մասնակցություն և ցու-  
ցաբերում բուլչեիկների III համագումարի դումարումը  
նախապատրաստելու դործում : 1904 թվի գեկտեմբե-  
րին ընկեր Ստալինը ղեկավարում և Բազվի բանվորնե-  
րի վիթխարի դործադուլը, վորը վերջացավ Ռուսաս-  
տանի բանվորական շարժման պատմության մեջ առա-  
ջին կոլեկտիվ պայմանագրի կնքումով : Բազվի բան-



վորներին այդ դործադուլը հսկայական արդեցություն ունեցաւ ամբողջ յերկրի բանլորական շարժման դար-դոցման վրա առաջին ուսուսական հեղափոխութեան նախորդակին: Առաջին ուսուսական հեղափոխութեան ընկեր Ստալինին գտնուեալ ե թրքիսիում:

1905 թվի սկզբին ընկեր Ստալինը գրում է «Անցողակի կուսակցական տարածայնութեան ներքին մասին» բրոշյուրը (այն հրատարակուեց 1905 թվի ամառը՝ բուլչեիկյան անկախ տպարանում):

Այդ բրոշյուրում, ինչպես և «Պատասխան սոցիալ-դեմոկրատին» հոդվածում, հրատարակուած «Борьба пролетариата» («Պրոլետարիատի պայքար») թերթում, ընկեր Ստալինը հանդես է դալիս վորպես կուսակցութեան կառուցման լինիյան սլանի ջերմ և հետևողական պաշտպան: Ստանալով «Борьба пролетариата» թերթի համարն ընկեր Ստալինի «Պատասխան սոցիալ-դեմոկրատին» հոդվածով, Լենինը «Пролетарий»-ում հրատարակում է մի գրախոսական այդ հոդվածի բարձր գնահատականով:

Ընկեր Ստալինն առաջին անգամ Լենինին հանդիպել է 1905 թվի դեկտեմբերին Տամբերֆորում, Ֆինլանդիայում, ուր նրանք յեկել էյին բուլչեիկների Համաուսական կոնֆերենցիային: Հիշելով այդ հանդիպման մասին, ընկեր Ստալինը պատմում է, վոր նրան դարմացրել են Լենինի արատափոր պարզութեանն ու համեստութեանը: Հետագայում Ստալինը գրում է, թե «...Լենինի այդ պարզութեանն ու համեստութեանը, աննկատելի մնալու կամ, համենայն դեպս, աչքի չընկնելու և իր բարձր դիրքը չհեշտելու այդ ձգտումը, — այդ դիժը Լենինի ամենաուժեղ կող-

մերից մեկն է, իբրև նոր մասսաների, մարդկութեան ամենախորը «ներքնախալերի» սրբղ և սովորական մասսաների նոր առաջնորդի»: («Լենինի մասին», Հայպետքաղհրատ, 1939 թ. էջ 24):

Այդ գծերը — համեստութեան և պարզութեան — ներկայացնում են հենց իր՝ ընկեր Ստալինի բնորոշ գծերը:

1905 թվի զինված ապստամբութեանը նախապատրաստելու ժամանակաշրջանում ընկեր Ստալինն Անդրդեմոկրատում բանվորներին զինելու դործում հսկայական աշխատանք է կատարել: Նա յե դեկալարել Անդրդեմոկրատի բանվորների և դյուղացիների պայքարը ցարական ինքնակալութեան դեմ:

Ընկեր Ստալինը կուսակցութեան IV (Միալորիչ) համագումարի (Ստոկհոլմում, 1906 թվին) ակտիվ մասնակիցն էր, վորտեղ նա Լենինի հետ միասին պաշտպանում էր բուլչեիկյան դիժն առաջին ուսուսական հեղափոխութեան մեջ:

Ընկեր Ստալինն ակտիվ մասնակցութեան է ունեցել կուսակցութեան V համագումարի (Լոնդոնում, 1907 թվին) աշխատանքներում: Հետագայում նա հրատարակեց իր «Դեկտատի հուշերը», վորոնցում վարպետորեն տվել է համագումարի աշխատանքի և արդյունքների գնահատականը և վեր հանել մենչեիզմի, վորպես մանր-բուրժուական հոսանքի դասակարգային բնութեանը:

ՌՄԴԲԿ V (Լոնդոնի) համագումարից հետո ընկեր Ստալինը դալիս է Բագու և լարված աշխատանք է տանում Բագլի կադմակերպութեանը կուսակցութեան այդ համագումարի լոզունդների շուրջը համախմբելու



ուղղութեամբ, ղեկավարում է բուլչեիկյան անլեզալ «Бакинский рабочий» որդանը, հաջող հակահարված է կազմակերպում մենչևեիկների դեմ, իր կողմը դրավելով սոցիալ-դեմոկրատական բանվորների ճնշող մեծամասնութունը: Բազմի կուսակցական կազմակերպութունն ընկեր Ստալինի ղեկավարութեամբ վերածվում է բուլչեիկմի միջնաբերդի:

Բազմում կատարած իր աշխատանքի ժամանակամիջոցում ընկեր Ստալինը բազմիցս յենթարկվում է ձերբակալութունների ու աքսորանքների:

1908 թվի մարտի 25-ից մինչև սեպտեմբերի 20-ը ընկեր Ստալինը մնացել է Բազմի բանտում: Բանտից նրան հաջողվում է կապ հաստատել Բազմի կոմիտեյի հետ և ղեկավարել նրա աշխատանքը. հենց բանտից էլ նա ղեկավարում է «Бакинский рабочий» թերթը:

1908 թ. սեպտեմբերի 20-ին ընկեր Ստալինը Բազմից աքսորվում է Վոլոգդայի նահանգ, Սուլժիչե-գոդսկ, վորտեղից նա 1909 թվի հունիսին փախչում է և, վերադառնալով Բազու, նորից յեռանդուն կերպով ձեռնամուխ է լինում Անդրկովկասի բուլչեիկյան կազմակերպութունների հետագա ամրապնդմանը: Ընկեր Ստալինը սխտեմատիկ կերպով յելույթներ է ունենում շրջանային և միջշրջանային կուսակցական ժողովներում, ղեկավարում է գործադուլների նախապատրաստումն ու անցկացումը, պայքար է ծավալում մենչևեիկներին, եսերներին, դաշնակներին և մյուս մասն-բուրժուական կուսակցութուններին մերկացնելու և ջախջախելու ուղղութեամբ:

1909 թվի հոկտեմբերին ընկեր Ստալինը դալիս է Թբիլիսի: Այստեղ նա Թբիլիսիի բուլչեիկների պայքա-

րը կազմակերպում և ուղղում է մենչևեիկ-լիկվիդատորների դեմ:

1910 թվի մարտի 23-ին ընկեր Ստալինը նորից է ձերբակալվում Բազմում:

Հինգամսյա բանտարկութունից հետո նրան 5 տարի ժամանակով արգելում են ապրել Անդրկովկասյան յերկրամասի սահմաններում, և նա կրկին ետապային կարգով (յերրորդ անգամ) աքսորվում է Վոլոգդայի նահանգը: Սակայն ընկեր Ստալինն այս անգամ ևս յերկար չի մնում աքսորում: 1911 թվի հուլիսին նա փախչում է Պետերբուրգ և այստեղ ընդհատակյա մեծ աշխատանք է տանում: Պետերբուրգից նա անլեզալ կերպով գալիս է Բազու և Թբիլիսի՝ Պրազայի կուսակցական կոնֆերենցիան նախապատրաստելու համար: Այս անգամ նրան հաջողվում է ազատ մնալ միայն միքանի ամիս: 1911 թվի սեպտեմբերի 9-ին Պետերբուրգում ընկեր Ստալինը ձերբակալվում է և նորից աքսորվում (չորրորդ անգամ) Վոլոգդայի նահանգ, Սուլժիչեգոդսկ քաղաքը: Սուլժիչեգոդսկի աքսորավայրից ընկեր Ստալինը Լենինին մի հրաշալի նամակ է գրում, վորի մեջ սուր կերպով հարձակվում է լիկվիդատոր-մենչևեիկների վրա և անողջ կերպով խարանում է դավաճան Տրոցկուն: Լենինին դրած այդ նույն նամակում ընկեր Ստալինն առաջ է քաշում Ռուսաստանում հեղափոխական աշխատանքը կազմակերպելու պլանը: «Ըստիս, — գրում է նա, — մեղ համար հերթական, հետաձգում չհանդուրժող խնդիր է հանդիսանում կազմակերպել կենտրոնական (ուսսական) մի խումբ, վորը միավորում է անլեզալ, կիսալեզալ և լեզալ աշխատանքն սկզբում

գլխավոր կենտրոններում (Պիտեր, Մոսկվա, Ուրալ, Հարավ)․․․ Այստեղից էլ, ըստիս, առաջ կընթանա կուսակցության վերածնության գործը» (Сборник, «Ленин и Сталин», т. I, стр. 530) :

1912 թվի հունվարին հրավիրված ՌՄԴԻԿ Պրադա-յի կոնֆերենցիան, Լենինի առաջարկությամբ, ընկեր Ստալինին հեռակայորեն ընտրեց Կենտրոնական կոմիտեյի անդամ, այլ և առանձնացրեց Կենտկոմի բյուրո ընկեր Ստալինի գլխավորությամբ՝ Ռուսաստանում աշխատելու համար։ Հենց այդ բյուրոն էլ դարձավ այն «կենտրոնական խումբը», վորի մասին Ստալինը գրել էր Լենինին և վորը հսկայական դեր խաղաց բոլ-շևիկյան կազմակերպություններն ամրապնդելու և կուսակցական աշխատանքը բարձրացնելու դործում։

1912 թ. փետրվարին ընկեր Ստալինը չորրորդ անգամ փախավ աքսորից։ Վերադառնալով Պետերբուրգ, նա հսկայական աշխատանք ծավալեց բոլշևիկյան կազմակերպությունները համախմբելու ուղղությամբ։ Կենտկոմի հանձնարարությամբ նա չըջադալում է Բոլսաստանի կարևորագույն շրջանները, նախապատ-րաստական աշխատանք է տանում հերթական մայրվ-կայի համար, ղեկավարում է «Звезда» թերթը և ղեկավար մասնակցություն է ունենում կուսակցության կենտրոնական օրգանի—«Правда» թերթի հիմնադրու-ման դործում։

1912 թվի ապրիլին ընկեր Ստալինին կրկին ձերբակալում են (հինգերորդ ձերբակալություն) և միջա-նի ամսից հետո չորս տարով աքսորում են հեռավոր Նարիմի յերկրամասը։ Այնտեղից փախչելն անհամե-մատ զժվար էր, բայց նույն թվականի ամառն ընկեր

Ստալինը չափազանց զժվար և վտանգավոր պայման-ներում փախչում է Նարիմից և վերադառնում Պետեր-բուրգ։ Այստեղից ընկեր Ստալինը դադտնի կերպով գնում է «արտասահման» Կրակով (Գալիցիա)—Լենինի մոտ, և մասնակցում է 1912 թվականի վերջին կայա-ցած բոլշևիկների արտասահմանյան խորհրդակցու-թյանը։ Շուտով նա վերադառնում է Պետերբուրգ, վորտեղ ղեկավարում է բոլշևիկների անլեզալ աշխա-տանքը, Պետական դումայի բոլշևիկյան Ֆրակցիան ու «Звезда» և «Правда» բոլշևիկյան թերթերը։

1912 թվականի աշնանը, յերբ տեղի էլին ունենում IV Պետական դումայի ընտրությունները, ընկեր Ստա-լինը ղեկավարում էր բոլշևիկների ընտրական կամպա-նիան։ Ընկեր Ստալինի գրած «Պետերբուրգի բանվոր-ների նակազն իրենց բանվոր դեպուտատին» հավանու-թյուն է դտել Լենինի կողմից և միաձայն ընդունվել է բանվորական ժողովներում։

1913 թվականին ընկեր Ստալինն ավարտեց «Մարքսիզմը և աղգային հարցը» աշխատությունը։ Այդ գրքում ընկեր Ստալինը, յեղնելով մարքսիզմ-լե-նինիզմի թեորիայից, մշակել է կուսակցության քա-ղաքականության հիմունքներն աղգային հարցի վերա-բերյալ—աղղերի ինքնորոշման իրավունքն ընդհուպ մինչև անջատումը և ինքնուրույն պետությունների ստեղծումը։ Լենինը չատ բարձր էր գնահատում այդ գիրքը և նրա մասին արտահայտվում էր, վորպես մարքսիստական լավագույն յերկի մասին—աղգային հարցի վերաբերյալ։

1913 թվի մարտին ընկեր Ստալինը նորից ձերբու-կավում է և հունիսին աքսորվում է Տուրուխանսկի

յերկրամասի Կուրեյկա գյուղը: Տուրուխանսկի յերկրամասում ընկեր Ստալինը մնում է չորս տարի: Բայց անգամ այդ խուլ և հեռավոր անկյունում նա ուշիուշիվ հետևում էր Ռուսաստանում և արտասահմանում տեղի ունեցող դեպքերը, ընթացքին: Ստալինը խարաղանում է անարխիստ Կրոպոտկինի ուռա-հայրենասիրական դրվածքները, մերկացնում է մենչևիկ Պլեխանովի և արևատա-յեվրոպական ոպորտունիստների բռնած դավաճանական շովինիստական դիրքն իմպերիալիստական պատերազմի հանդեպ ունեցած վերաբերմունքի հարցում: Ընկեր Ստալինի՝ աքսորավայրում մշակած բանաձևը պատերազմի մասին ամբողջովին համընկնում է իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու լենինյան գծին:

Պատերազմի տարիներին կրած աքսորը թվով վեցերորդն էր և ընկեր Ստալինի վերջին աքսորն էր: Այդ աքսորից նրան ազատեց 1917 թ. Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը:

Ընկեր Ստալինը նորից Պետրոգրադումն է, Ռուսաստանի հեղափոխական մայրաքաղաքում: Կուսակցությունն սպասում էր իր առաջնորդների ցուցամունքին: Լենինը վորպես տարադիր դտնվում էր արտասահմանում, ռազմաճակատներով կտրված հեղափոխական Ռուսաստանից: Նրա առաջին «Նամակ հեռվից»-ը՝ «Ղևաջին հեղափոխության առաջին ետապը» վերնագրով Պետրոգրադ է ընկել միայն 1917 թ. ապրիլի 3—4-ին (մարտի 21—22):

Ընկեր Ստալինն աքսորից վերադարձավ մարտի 25 (12)-ին, իսկ մարտի 27 (14)-ին արդեն «Правда»-


յում յերևաց նրա «Իանվորների և զինվ. բների դեպուտատների խորհուրդների մասին» հոդվածը, վորտեղ նա ցույց էր տալիս, թե անհրաժեշտ է ստեղծել հեղափոխական պայքարի մարմիններ՝ Իանվորների և զինվորների դեպուտատների խորհուրդներ, անհրաժեշտ է անհապաղ զինել բանվորներին, ստեղծել բանվորական դվարդիա: Այդ յերաշխիք կհանդիսանա միապետության վերականգնման դեմ և պայման՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստականին անցնելու համար: Յերբ հաջորդ որը յերևաց մենչևիկների ու եսերների հետ միանալու պահանջ անող և պաշտպանողականության կոչ անող դավաճան Կամենևիվի հոդվածը, ընկեր Ստալինը «Правда»-յի № 10-ում անհապաղ պատասխանեց «О войне» հոդվածով, վորի մեջ պաշտպանում էր բուլչևիկյան դիժը, ապացուցելով, թե պետք է պատերազմ հայտարարել իմպերիալիստական պատերազմին և դրանով իսկ ապահովել հեղափոխության հաղթանակը:

Ապրիլի 3 (16)-ին ստիպողական վսարանդիությունից Ռուսաստան վերադարձավ Լենինը: Մյուս որը Լենինը հրապարակեց իր հռչակավոր, համալխարհային-պատմական նշանակություն ունեցող «Ապրիլյան թեզիսները»:

Ընկեր Ստալինը վճռաբար պաշտպանում էր Լենինի դիրքերը: Ապրիլյան կոնֆերենցիան ընդունեց լենինյան թեզիսները և կուսակցությանն ուղղեց պայքարի՝ սոցիալիստական հեղափոխության համար:

Լենինի հետ միասին ընկեր Ստալինը վճռական հակահարված տվեց դավաճաններ Կամենևիվին և Ռիկովին, վորոնք հանդես էյին գալիս Լենինի դեմ, դե-

5685-88  
6309





պի սոցիալիստական հեղափոխութիւնը տանող ուղ-  
ղութեան դեմ :

Ապրիլյան կոնֆերենցիայում Ստալինը զարգացրեց  
հետևողական մարքս-լենինյան գիծն աղբային հար-  
ցում : Ընկեր Ստալինին դեմ դուրս յեկավ Պյատաի-  
վը, վորը Բուխարինի հետ միասին դեռևս պատերազ-  
մի տարիներին աղբային հարցում նացիոնալ-չովինի-  
սական զիբը եր բռնել : Կուսակցութիւնը միահամուռ  
կերպով զնայ Լենինի և Ստալինի հետևից :

1917 թվի մայիսին Կենտկոմն ընկեր Ստալինին  
ընտրում է Գորբյուրոյի անդամ, վորպիսին նա մնում  
է մինչև այսօր : 1917 թվի հուլիսյան որերից հետո,  
յերբ Լենինը, հետապնդելով հակահեղափոխական  
ժամանակավոր կառավարութեան կողմից, ընդհատա-  
կում եր գտնվում, ընկեր Ստալինը Կենտրոնական Կո-  
միտեյի և կուսակցութեան Կենտրոնական որդանի  
փաստական ղեկավարն եր :

Ընկեր Ստալինը ղեկավարում եր կուսակցութեան  
VI համագումարի աշխատանքները (1917 թ. ոգոստոս) :  
Նրա ղեկավարութեամբ, Լենինի ղիբեկտիվներով,  
VI համագումարը զարձայ Հոկտեմբերյան Սոցիալիս-  
տական Մեծ հեղափոխութիւնը նախապատրաստող  
համագումար : VI համագումարը կուսակցութեանն  
ուղղեց զեպի զինված ապստամբութիւն, ղեպի բուր-  
ժուստիայի և կալվածատերերի իշխանութեան տապա-  
լումը և բանվոր դասակարգի ղիկտատուրայի հաստա-  
տումը : Համագումարը հակահարված տվեց տրոց-  
կիստներին ու բուխարինականներին, վորոնք պայքա-  
րում եյին զինված ապստամբութիւնը նախապատ-  
րաստելու դեմ, սոցիալիստական հեղափոխութեան  
դեմ :

Համագումարը համախմբվեց ընկեր Ստալինի  
չուրջը, վորը պաշտպանում եր Լենինի ուսմունքը մեր  
յերկրում սոցիալիզմի հաղթանակելու հնարավորու-  
թեան մասին : Ստալինի ղեկավարութեամբ ամբողջ  
կուսակցութիւնն իրականացնում եր Լենինյան ղիբեկ-  
տիվները զինված ապստամբութիւնը նախապատրաս-  
տելու ուղղութեամբ :

Բուլչեիկների կուսակցութեան Կենտկոմի պատմա-  
կան նիստերում հոկտեմբերի 23 (10)-ին և 29 (16)-ին  
ընկեր Ստալինը հանդես յեկավ զինված ապստամբու-  
թեան վերաբերյալ Լենինի ղծի ջերմադին պաշտպա-  
նութեամբ : Նա խարանեց Կամենեվի և Զինովիեվի  
վախկոտութիւնն ու ղավաճանութիւնը, բառաչարկեց  
վճռական հարձակողական գործողութիւններ սկսել  
հակահեղափոխութեան ուժերի դեմ : Կուսակցութեան  
Կենտկոմի հոկտեմբերի 29 (16)-ի նիստում ընտրվեց  
ապստամբութիւնը ղեկավարող Կուսակցական կենտ-  
րոն՝ ընկեր Ստալինի գլխավորութեամբ :

Նոյեմբերի 7-ին (հոկտեմբերի 25) զինված ապս-  
տամբութիւնը Պետրոգրադում հաղթանակեց :

Սորհրդային կառավարութեան գոյութեան առաջին  
որերից ընկեր Ստալինն Ազգութիւնների գործերի ժո-  
ղովրդական կոմիսար եր, իսկ 1919 թվականից—նաև  
Բանվորա-գյուղացիական անսջութեան ժողովրդական  
կոմիսար : 1922 թ., կուսակցութեան XI համագումա-  
րում, Լենինը հայտարարեց, թե բացի ընկեր Ստալի-  
նից ղժվար է գտնել մի այլ մարդ, «...վորի մոտ կա-  
բողանան գնալ ազգերի ներկայացուցիչներից յուրա-  
քանչյուրը և մանրամասն պատմեն գործի ելուցթու-  
նը» (Յերկ., 4. XXXII, հայ. հրատ., էջ 352) : Լենի-  
նը բարձր եր զնահատում ընկեր Ստալինին, վորպես

Բանդուղտեսչուժյան ժողկոմատի ղեկավարը: «Հըսկայական գործ ե,—ասում եր Լենինը:—Բայց վորպեսզի ստուգման հետ վարվել իմանանք, հարկավոր է, վոր դործի գլուխ կանգնած լինի հեղինակությունն ունեցող մարդ, հակառակ դեպքում մենք կթաղվենք, կխեղդվենք մանր ինտրիգների մեջ» (նույն տեղում):

Բրեստի հաշտության դժվարին որերին, յերբ հեղափոխության բախտն եր վորոշվում, Ստալինը Լենինի հետ միասին հաստատորեն պաշտպանում եր բոլշևիկյան գիծը, պայքարում եր դավաճաններ Տրոցկու և Բուխարինի դեմ, վորոնք այն ժամանակ արդեն հանդես յեկան վորպես գերմանական իմպերիալիզմի ծախու կամակատարներ, վորպես խորհրդային իշխանության և նրա ղեկավարները—Լենինի, Ստալինի, Սվերդլովի դեմ նյութավոր հակահեղափոխական դավադրության կազմակերպիչներ: Դավաճաններ Բուխարինը, Տրոցկին, Պյատակովը և մյուսներն իրենց նպատակ եյին դրել վիժեցնել Բրեստի հաշտությունը, տապալել խորհրդային իշխանությունը, ձերբակալել ու սպանել Վ. Ի. Լենինին, Ի. Վ. Ստալինին, Յա. Մ. Սվերդլովին և բուխարինականներից, արոցկիստներից և «ձախ» եսերներից մի այնպիսի կառավարություն կազմել, վորը համապատասխաներ խորհրդային հողն անդամահատելու, խորհրդային ժողովուրդը խեղդելու, կապիտալիզմը վերականգնելու ձգտող ոտարերկրյա իմպերիալիստների պահանջներին:

Յերբ Բրեստի հաշտության զնով ձեռք բերված կարճատև դադարը վիժեցվեց ինտերվենտների և սպիտակ-գվարդիական զենեքալների կողմից և սկսվեց

քաղաքացիական պատերազմը, ընկեր Ստալինը, իրականացնելով կուսակցության դիրեկտիվները, բանավորները և գլուխացիների մասսաներին կազմակերպեց խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար:

Կաղաքացիական պատերազմի բոլոր տարիներն ընկեր Ստալինն անց ե կացրել բազմաթիվ ուսումնական տներում: Վորտեղ առանձնապես ծանր ու վտանգավոր եր, վորտեղ հեղափոխության բախտը մաղից եր կախված, այնտեղ Լենինը, կուսակցությունն անփոփոխ կերպով ուղարկում եյին ընկեր Ստալինին:

Այդպես եր Ֆարիցինում, վորն ընկեր Ստալինի կողմից վերածվել եր անառիկ բերդի, վորին զարկվելով ջարդուխուր են արել իրենց ճակատներն սպիտակ բանդաները: Այդպես եր նաև արևելյան ճակատում, վորտեղ ընկեր Ստալինը, հաղթահարելով թըռնամիների և պանիկյորների—Տրոցկու հովանավորյալների կատաղի դիմադրությունը,—բեկում ստեղծեց և հաղթանակն ապահովեց: Այդպես եր Պետրոգրադի ուսումնական տղամ, վորտեղ ընկեր Ստալինը, «դեն նետելով ծովային գիտությունը», հաղթական հարձակում կազմակերպեց ծովից ու ցամաքից «Կրամնայագորկա» և «Մերայա լոչադ» ֆրոտերի դավաճանական կայազորների վրա: Այդպես եր հարավային ճակատում, վորտեղ ընկեր Ստալինը, մերժելով Տրոցկու դավաճանական, վնասարարական պլանը, առաջ քաշեց և իրականացրեց դենիկինյան հորդաներին ջախջախելու իր հանձարեղ պլանը: Այդպես եր ամենուրեք, բոլոր ուղմաճակատներում, ամեն տեղ, ուր հեղափոխությանը վտանգ եր սրբանում:

Մորհրդային հանրապետությունը բարձր գնահա-



տեց քաղաքացիական պատերազմի ճակատներում ընկեր Ստալինի մղած հերոսական պայքարը: Ահա թե ինչ վորոշեց Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն 1919 թվին:

«Մահացու վտանգի բոլեյին, յերբ. ամեն կողմից թշնամիներն խիտ ողակով շրջապատված Խորհրդային իշխանությունը հետ եր մղում թշնամու հարվածները, այն բոլեյին, յերբ Բանվորա-Գյուղացիական Հեղափոխության թշնամիները 1919 թ. հուլիսին մոտեցել էին Կրասնայա Գորեկային, Խորհրդային Ռուսաստանի համար այդ ծանր ժամին, Համառուսական Կենտրոնական Նախադահուլթյան կողմից մարտական պոստում նշանակված Իոսիֆ Վլասարիտնովիչ Ստալինն իր յեռանդով և անխոնջ աշխատանքով կարողացավ համախմբել Կարմիր Բանակի յերերող շարքերը: Անձամբ դռնվելով մարտական դժի շրջանում, նա մարտական կրակի տակ անձնական որինակով վողեորում եր Խորհրդային Հանրապետության համար մարտընչողների շարքերը: Պետրոպոլիս պաշտպանության ուղղությամբ մատուցած բոլոր ծառայությունները, ինչպես նաև նրա տարած հետադա անձնագրահ աշխատանքը Հարավային ճակատում նշանավորելու համար Համառուսական Կենտրոնական վորոշեց Ի. Վ. Ստալինին պարգևատրել Կարմիր Դրոշի շքանշանով»:

1920 թվականին՝ լիառարան ճերտակական Կարմիր Բանակը Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ ինտերվենտներին դուրս քշեց Ռուսաստանի սահմաններից, ջախջախեց սալիտակ-գվարդիական բանդաները: Քաղաքացիական պատերազմն ավարտվեց: Յերկու պատերազմների՝ իմպերիալիս-

տակոն և քաղաքացիական պատերազմների՝ հետևանքը հանդիսացող ծանր փլուզման պայմաններում Լենինը ծավալեց սոցիալիզմի շինարարության և Ռուսաստանի ելեկտրիֆիկացիայի հոյակապ պլանը: Ստալինը ջերմազին հանդես յեկավ այդ հանձարեղ պլանի պաշտպանությամբ, սուր կերպով խարանելով նրա վեմ պայքարող զավաճաններ Տրոցկուն, Ռիկովին և Տյուններին:

1921 թվին կուսակցությունը կատարեց զժվարին անցում ռադիկական կոմունիզմի քաղաքականությունից գեպի նոր անտեսական քաղաքականությունը: Կուսակցությունն ամբասնդեց բանվորների և գյուղացիների զաչինքը նոր անտեսական հիմունքի վրա: Բողջելով թշնամիներ Տրոցկին, Բուխարինը, Ջինովյեվը, Կամենևյը, Ռիկովը, Պյատակովը և նրանց վոչ մեծաքանակ համախոհները կատարի պայքար էլին մղում կուսակցության դեմ: Կուսակցությունը համախմբվեց Լենինի և Ստալինի շուրջը, ջախջախելով Տրոցկուն և ժողովրդի մյուս թշնամիներին:

1922 թվին, Լենինի առաջարկությամբ, ՌԿ(Բ)Կ Կենտրոնական Կոմիտեն ընկեր Ստալինին ընտրեց բողջելիներն կուսակցության Կենտրոնական կոմիտեյի գլխավոր քարտուղար: Այդ ժամանակվանից սկսած ընկեր Ստալինը մշտապես աշխատում է այդ պոստում:

1922 թվի գեկտեմբերին ԽՍՀՄ Խորհուրդների 1 համագումարում, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, տեղծվեց Խորհրդային Ռուսաստանի ժողովուրդների կամավորության և լիակատար իրավահավասարության հիման վրա յեղբայրական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն—ԽՍՀՄ:



1923 թ. ապրիլին, կուսակցության XII համադու-  
մարում, ընկեր Ստալինը հանդես յեկավ մի դեկուցու-  
մով ազգային հարցի մասին: Ընկեր Ստալինի զեկուց-  
ման համաձայն XII համաձումարն ընդունեց վորոշում-  
ներ՝ ուղղված ՌՍՀՄ ժողովուրդների մեծ բարեկա-  
մության ամրապնդմանը: Համադումարը մատնանչեց,  
թե անհրաժեշտ է համառ պայքար մղել աղբու-  
թյուն-  
ների փաստական, աշխնքն՝ տնտեսական և կուլտու-  
րական՝ անհավասարությունը վերացնելու համար,  
պայքար մղել հետամնաց ժողովուրդների կուլտուրա-  
կան և տնտեսական մակարդակը բարձրացնելու հա-  
մար:

1924 թ. հունվարի 21-ին մահը մեր շարքերից  
խլեց մեծ առաջնորդ և ուսուցիչ, մարդկության մե-  
ծագույն հանճար Լենինին:

Լենինի հերոսական կյանքն ու պայքարն անխղե-  
լիորեն կապված են նրա մեծ գինակից և նրա դործը  
շարունակող ընկեր Ստալինի կյանքի ու պայքարի հետ:

Տասնամյակների ընթացքում Լենինն ու Ստալինը  
միշտ ընթացել են միասին, ձեռք ձեռքի տված: Վոչ  
նրանց բաժանող հսկայական տարածությունները, վոչ  
եւ վտարանդիությունը, բանտերն ու քարտրները չկա-  
րողացան խախտել պրոլետարիատի մեծ առաջնորդների  
անսասան դաղադարական միասնությունն ու բարեկա-  
մությունը: Նրանք միասին են ստեղծել մեր կուսակ-  
ցությունը, նրանք միասին են ջախջախել նրա թշնա-  
միններին—մենչևիկներին, տրոցկիստներին, եսերնե-  
րին և մյուսներին, նրանք միասին են տարել ՌՍՀՄ  
ժողովուրդներին դեպի Հոկտեմբերյան Սոցիալիստա-  
կան Մեծ հեղափոխությունը, նրանք միասին են կազ-

մակերպել ներքին և արտաքին թշնամիների ջախջա-  
խումը, նրանք միասին են դրել մեծ սոցիալիստական  
կառույցի հիմքի առաջին քարերը, նրանք միասին են  
առաջ շարժել, վեր հանել բարձրագույն աստիճանի  
բանվորական շարժման հեղափոխական թեորիան—  
մարքսիզմ—լենինիզմը:

Լենինի և Ստալինի կյանքն ու պայքարն անխղե-  
լիորեն միասնացված ու միահյուսված են իրար մեջ:

Լենինի մահից հետո հրավիրված ՌՍՀՄ Խոր-  
հուրդների II համադումարում ընկեր Ստալինն ամբողջ  
կուսակցության անունից մեծ յերդում տվեց. բարձր  
պահել և մաքուր պահպանել կուսակցության անդամի  
կոչումը, աչքի լույսի պես պահպանել մեր կուսակցու-  
թյան միասնությունը, պահպանել ու ամրապնդել  
պրոլետարիատի դեկտատուրան, բոլոր ուժերով ամ-  
րապնդել բանվորների և դյուղացիների դաշինքը, ամ-  
րապնդել և ընդլայնել Խորհրդային Հանրապետու-  
թյունների Միությունը, ամրապնդել մեր Կարմիր Բա-  
նակը, մեր Կարմիր Նավատորմը, ամրապնդել և ընդ-  
լայնել ամբողջ աշխարհի աշխատավորների միություն-  
ը—Կոմունիստական Ինտերնացիոնալը:

Այդ մեծ յերդումն ընկեր Ստալինն ու բուլչևիկնե-  
րի կուսակցությունը պահել են ու կատարել մինչև  
վերջը: Բուլչևիկների կուսակցությունը համախմբվեց  
ընկեր Ստալինի շուրջը—մեծ Լենինի գործի ամենահա-  
վատարիմ ու ասենակայուն շարունակողի շուրջը:

1924 թվին ընկեր Ստալինը հրապարակեց տրոց-  
կիզմի դաղադարական ջախջախման և Լենինիզմի  
պաշտպանության գործում բացառիկ նշանակություն  
ունեցող «Լենինիզմի հիմունքների մասին» թեորետի-



կահան աշխատութիւնը: Ընկեր Ստալինի այդ աշխատութիւնն ամենաարժեքավոր ավանդ է հանդիսանում մարքսիզմ-լենինիզմի գանձարանում, այն նոր բարձունքի հասցրեց և առանձն շարժեց Մարքսի-Ենգելսի-Լենինի անմահ մեծ ուսմունքը:

Հաղթահարելով հսկայական տնտեսական դժվարութիւններ, դարդացնելով և ամեն կերպ ամրապնդելով քաղաքի և գյուղի զոգումը, հաղթահարելով Համկ(բ)ի շարքերում դոյութիւն ունեցող հակակուսակցական տարրերի կատաղի դիմադրութիւնը, կուսակցութիւնը, ընկեր Ստալինի շուրջը համախմբված, մասսաներին մոբիլիզացիայի յեր յենթարկում պայքարելու մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու համար:

1925 թ. կուսակցութեան XIV համագումարը, ընկեր Ստալինի առաջարկութեամբ, ընդունեց ԽՍՀՄ սոցիալիստական ինդուստրացման սլանը:

«Մեր յերկիրն ազրարայինից փոխարկել ինդուստրիալ յերկրի, վորն ընդունակ լինի իր սեփական ուժերով արտադրել անհրաժեշտ սարքավորում—ահա թի վորն է մեր գլխավոր դժի էյութիւնը, հիմքը» (Сталин, Стенографический отчет XIV с'езда ВКП(б), стр. 488):

Ընկեր Ստալինը մատնանշում էր, վոր միայն նոր տեխնիկական բազայի վրա նոր Փարրիկաներ ու դործարաններ ստեղծելով և հին դործարանները վերասարքավորելով կարելի յե սոցիալիզմ կառուցել և ապահովել Խորհրդային յերկրի անկախութիւնը կապիտալիստական յերկրներից: Միայն յերկրի սոցիալիստական ինդուստրացումն անցկացնելով կարելի յե կարճիւր Բանակը զինել ժամանակակից տեխնիկայով

(ոդանալերով, տանկերով և այլն) և կազմակերպել մեր հայրենիքի հուսալի սրաշտպանութիւնն իմպերիալիստական ամաղակներէց:

Ստալինի վորեչնչած և ղեկավարած աշխատավորական մասաները վտահ կերպով և արագորեն ընթացան ԽՍՀՄ-ն հետամնաց ազրարային յերկրից առաջավոր ինդուստրիալ յերկրի վերածելու ուղիով:

Տրոցկիստական—գլխովյեվական դաւաճանական խումբը, ինչպես և բուխարինական—ուկրոյան բանակի մատնիչները, հանդես յեկան յերկրի ինդուստրացման դեմ: Նրանց մղած սպաքարը Լենինի—Ստալինի կուսակցութեան դեմ՝ սպաքար էր մեր յերկրում կապիտալիզմը ռեստավրացիայի յենթարկելու համար:

Կուսակցութիւնն ընկեր Ստալինի գլխավորութեամբ ջախջախեց ժողովրդի այդ դարչելի թշնամիներէ սրոցկիստական—գլխովյեվական և բուխարինական—ուկրոյան բանդային, վորոնք հետագայում գլորվեցին Փաշիստական հակահեղափոխութեան բանակը:

Տանկելով առաջին խոշոր հաղթանակներն ինդուստրացման դործում, կուսակցելով անհրաժեշտ ուժեր և միջոցներ, Լենինի—Ստալինի կուսակցութիւնը նախապատրաստեց հաջորդ կարևորագույն խնդրի—դուրում կոյտնտեսային կարդ ստեղծելու—լուծումը:

1927 թ. դեկտեմբերին, կուսակցութեան XV համագումարում, ընկեր Ստալինը մատնանշեց, վոր գյուղի չքավորութիւնը, կուլակային ստրկացումը, դուրդատնտեսութեան հետամնացութիւնն ու ցածր արտադրողականութիւնը կարելի յե ընդմիջա վերացնել միայն կոլեկտիւլացման միջոցով և վոր գլխավորն սյոժմ «...մանր և փոշիացած դուրդացիական տնտե-



սուբյուկտներից խոշոր և միացյալ տնտեսությունների անցնելն է՝ հողի հանրային մշակման հիման վրա, հողի կոլեկտիվ մշակմանն անցնելը՝ նոր, բարձրագույն տեխնիկայի բազայի վրա»:

Աշխատավոր գյուղացիներն արձագանգեցին կուսակցութեան կոչին, ընկեր Ստալինի կոչին. նրանք ուղղվեցին դեպի կոլտնտեսությունները, սկսեցին գյուղում խոշոր սոցիալիստական գյուղատնտեսություն ստեղծել:

Մարքսիստ - ադրաբազեաների կոնֆերենցիային (1929 թ. դեկտեմբերի 27-ին) ունեցած իր պատմական յեկույթում ընկեր Ստալինը խնդրեց դրեց կուլակուսթյան սահմանափակման և արտադրման քաղաքակա-նությունից անցնել կուլակուսթյունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականութեանը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Ընկեր Ստալինի այդ յեկույթը մտրիլիզացիայի յենթարկեց ամբողջ կուսակցութեանը, բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիութեանը՝ պայքարելու գյուղատնտեսութեան կոլեկտիվացման համար, վճռական մարտ մղելու կուլակուսթյան—վերջին և ամենաբազմաքանակ շահագործող դասակարգի դեմ: Սոցիալիստական ինդուստրացման դեմ, կոլտնտեսությունների շինարարութեան դեմ, մեր յերկրի կապիտալիստական դասակարգերի լիկվիդացիայի դեմ կրկին դուրս յեկան արգահատելի դավաճանները—Ռիկովը, Տոմսկին, Բուխարինը, վորոնք տրոցկիստական բանդիտների հետ միասին վորճում ելին յերկիրը դարձնել դեպի կապիտալիզմի ռեստավրացիայի ուղին:

Մինչև վերջը մերկացնելով կապիտալիզմի ռես-

տավրատորներին, բուլչեիկյան կուսակցութեանն ընկեր Ստալինի դեկավարութեամբ ժողովրդին դեպի սոցիալիզմի նորանոր հաղթանակներ տարավ: Կուսակցութեանը կազմակերպեց և գլխավորեց լայն սոցիալիստական մրցություն և մասսայական աշխատանքային վերելք Փարբիկաներում ու գործարաններում: Ստալինյան հնդամյակների հարվածայինները ցույց տվին հերոսական սոցիալիստական աշխատանքի մինչև այժմ աշխարհումս չտեսնված որինակներ:

Աշխատանքը ԽՍՀՄ մեջ վեր է ածվել, ինչպես ասել է ընկեր Ստալինը, պատվի գործի, վառքի գործի, արիութեան ու հերոսութեան գործի:

«Տնտեսավարների խնդիրները մասին» արտասանած իր ճառում (1931 թ. փետրվար) ընկեր Ստալինը տվեց պատմական լողուններ՝ «Բուլչեիկները պետք է տիրապետեն տեխնիկային», «Վերակառուցման ժամանակաշրջանում տեխնիկան վճռում է ամեն ինչ»:

«Չկան այնպիսի ամբողջներ, վոր բուլչեիկները չկարողանան վերցնել»,—ասում եր ընկեր Ստալինը: Յեւ ժողովուրդների առաջնորդի այդ կոչը վորդեշնչում եր տնտեսավարներին, վորդեշնչում եր բոլոր բուլչեիկներին, կուսակցական և անկուսակցական, տեխնիկային տիրապետելու, սոցիալիստական շինարարութեան ամենաբարդ խնդիրները վճռելու:

1931 թ. հուլիսին ընկեր Ստալինը տնտեսավարներին առջև դրեց վեց պատմական սրայմաններ, վորոնք անհրաժեշտ են ամբողջ սոցիալիստական տնտեսութեանը հաջող զարգացնելու համար: «Նոր ձևով աշխատել, նոր ձևով դեկավարել»—այսպիսի պահանջներ կայացրեց տնտեսավարներին ընկեր Ստալինը:



«Բուլչեիզմի պատմութեան միջանկի հարցերի մասին» զբաժ իր նամակում (1931 թ.) ընկեր Ստալինը կուսակցութեան պատմութեան հարցերը վեր հանեց հակասական գիտական ու քաղաքական բարձրութեան, կոչ արեց դեպքս լինել լենինիզմի գիմակալորված թշնամիներին, սոցիալիզմի թշնամիներին նկատմամբ: Հենց այն ժամանակ ընկեր Ստալինն ասում էր, վոր «տրոցիկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատն է», վոր «...լիբերալիզմը տրոցիկիզմի նկատմամբ, թեկուզ և ջախջախված ու գիմակալորված տրոցիկիզմի, քյալլադոյությունն է, վորը սահմանակցում է հանցադործութեան հետ, բանվոր դասակարգին դավաճանելու հետ»:

Տալով առաջին հնդամյակի հաղթանակների արդյունքները, ընկեր Ստալինն զըուշացնում էր կուսակցութեանը, վոր Սորհրդային պետութեան հզորութեան աճն ուժեղացնելու յե մեռնող դասակարգերի վերջին մնացորդների գիմադրությունը: Բանվոր դասակարգի ուժեղ և հզոր զիկտատուրան հարկավոր է նրա համար, վորպեսզի հողմացրել անենք մեռնող դասակարգերի վերջին մնացորդները և ջարդենք նրանց մեքենայությունները. «...հեղափոխական գլխատությունը հենց այն վորակն է, վորն այժմ առանձնապես անհրաժեշտ է բուլչեիկներին»,—ասում էր ընկեր Ստալինը:

1933 թ. կայացած հարվածային-կոլտնտեսականների Համամիութենական Առաջին Համադումարում ընկեր Ստալինը մի լողունգ առաջադրեց. «Բուրոր կոլտնտեսականներին դարձնել ունեոր, իսկ կոլտնտեսությունները՝ բուլչեիկյան»:

1935 թ. կայացած հարվածային-կոլտնտեսական-

ներին Համամիութենական Յերկրորդ Համադումարում ընկեր Ստալինի զեկալարութեամբ մշակվեց Գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրությունը: Այդ կանոնադրությունը վերջնականապես ամրացրեց գյուղացիական կյանքի նոր կոլտնտեսային կարգը: Կոլտնտեսությունների զբաղեցրած հողը խորհրդային իշխանութեան կողմից ամրացվեց նրանց առհալեռ անվճար ողտադործման համար:

1935 թ. մայիսին ընկեր Ստալինը Կրեմլում հանդես յեկալ Կարմիր Բանակի ահադեմիականների առջև: Նա կուսակցութեան առջև, ամբողջ յերկրի առջև մի նոր ինդեր դրեց: Ընկեր Ստալինը մատնանչեց, վոր «Տեխնիկան վճռում է ամեն ինչ» լողունգը հանդիսանում է արդեն անցած ուղու արտացոլումը: Այժմ կարևորագույն լողունգ է հանդիսանում՝ «Կադրերն են վճռում ամեն ինչ»:

«Տեխնիկան՝ առանց տեխնիկային տիրապետող մարդկանց,—մեռած է,—ասել է ընկեր Ստալինը:—Տեխնիկան՝ տեխնիկային տիրապետող մարդկանց զըլլալորութեամբ կարող է և պետք է հրաշքներ դործել»:

«Պետք է, վերջապես, հասկանալ,—ասում էր ընկեր Ստալինը,—վոր աշխարհում գոյություն ունեցող բոլոր բարժեքավոր կապիտալներից ամենաարժեքավոր է ամենավճռական կապիտալը հանդիսանում են մարդիկ, կադրերը»:

Ի պատասխան առաջնորդի այդ կոչին մեր յերկրի լավադոյն մարդիկ ցույց տվին, վոր նրանք, ակրապետելով նոր տեխնիկային, կարող են հրաշքներ դործել: Ստախանովը, Բուսիդինը, Դեմչենկոն, Կրիվոնոսը և ուրիշ շատերը ցույց տվին սոցիալիստական աշխատանքի որինակներ:



Ստալինի հանձարը բացահայտեց ստալինոլոգիայի շարժման սրատմական մեծ նշանակությունը: Ընկեր Ստալինը ցույց տվեց, Վոր այս շարժումը ճանապարհ է հարթում դեպի կոմունիզմը, Վոր նա տանում է դեպի մտավոր և Ֆիզիկական աշխատանքի միջև դոյու-թյուն ունեցող հակադրության լիկվիդացիան, բան-վորներին բարձրացնելով ինժեներա-տեխնիկական աշ-խատողների մակարդակին:

Ընկեր Ստալինի ղեկավարությունը կուսակցու-թյունը կադմակերպեց ստալինոլոգիայի շարժումը, ջարդ ու փշուր անելով այն թշնամական փորձերը, Վորոնք նպատակ ունեյին վիժեցնելու աշխատանքի սոցիալիս-տական կադմակերպման համար տեղի ունեցող ժողո-վրդական մեծագույն շարժումը: Ընկեր Ստալինը Կրեմլում արդյունաբերության և տրանսպորտի ստա-լինոլոգիաների, կոմբայնավարների, տրակտորա-վարների, կթողների և ուրիշների հետ միասին մանրա-մասնորեն քննարկում էր ստալինոլոգիայի շարժումը սո-ցիալիստական շինարարության բոլոր բնադավանե-րում ծավալելու հարցերը:

Ստալինյան յերկու հնդամյակները կատարելու հե-տևանքով ԽՍՀՄ-ն ընկեր Ստալինի ղեկավարությամբ վերածվեց հզոր սոցիալիստական ինդուստրիալ յերկ-րի, աշխարհի ամենախոշոր սոցիալիստական հողա-դործության յերկրի:

ԽՍՀՄ մեջ վոճնչացված են շահագործող դասա-կարգերը: Մեր յերկրում չկան և չեն կարող լինել դործադրիկություն, կրիզիսներ, աղքատություն ու քայքայում: Ընկեր Ստալինի ղեկավարությամբ մեր մեծ հայրենիքի ազատ ժողովուրդները հիմնականում կառուցել են սոցիալիզմը:

Ընկեր Ստալինի անխոնջ հողատարություն շնոր-հիվ Կարմիր Բանակը դարձել է հզոր, անպարտելի մի ուժ, իսկ Խորհրդային Միությունը — սոցիա-լիզմի անառիկ բերդը:

Ընկեր Ստալինը Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեյի Նախագահության անդամ է, ամ-բողջ աշխարհի բանվոր դասակարգի և աշխատավորու-թյան առաջնորդը:

Ընկեր Ստալինը, Լենինի դործի մեծ շարունակու-ղը, հանդիսանում է լենինյան սրբուխարական ինտեր-նացիոնալիզմի, բոլշևիզմի փառապանծ տրադիցիաների հավատարիմ կրողը միջադարձի կոմունիստական շարժման մեջ:

Ընկեր Ստալինը հանդիսանում է բանվորների և զյուլացիների Սոցիալիստական պետություն այն նոր Սահմանադրության ստեղծողը, Վոր ընդունված է ըստ 1936 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ Խորհուրդների Արտա-կարգ VIII համագումարում նրա տված պատմական դե-կուցման, համաժողովրդական քննարկությունից հետո: Նոր Սահմանադրությունը հանդիսանում է մեր եպոխա-յի մեծագույն փաստաթուղթը, մեր յերկրում սոցիա-լիզմի հաղթանակի փայլուն մարմնացումը, Խորհրդա-յին Միության բոլոր ժողովուրդների հսկայական նվա-ճումը: Սոցիալիզմի և իսկական դեմոկրատիզմի այդ Սահմանադրությունը, Խորհրդային Միության ժողո-վուրդների կողմից միահամուռ կերպով կոչվել և Ստալինյան Սահմանադրություն:

Ընկեր Ստալինի անմիջական մասնակցությամբ դրված «Համկ(բ)ի պատմությունը» հանդիսանում է մարքսիզմ-լենինիզմի մեծագույն դանձարանը, Վորը



միլիոնավոր աշխատավորներին դինուժ ե բոլշևիկմի հղոր գենըով:

Մարքսի — Ենդելսի — Լենինի անմահ ուսմունքը հանձին ընկեր Ստալինի դտել ե իր արժանավոր կրողին ու հանճարեղ շարունակողին: Ընկեր Ստալինը նոր բարձունքի վեր հանեց սոցիալիստական հեղափոխության, բանվոր դասակարգի դիկտատուրայի ե կոմունիստական հասարակության կառուցման թեորիան: Հաղթահարելով բոլոր խոչընդոտները, Չարգելով ժողովրդի թշնամիների կատաղի ղիմադրությունը, ԽՍՀ Միության աշխատավոր մասսաները վստահորեն ընթանում են առաջ, վորովհետև աշխատավորների ձեռքումն ե անսխալ կողմնացույցը՝ Մարքսի—Ենդելսի—Լենինի—Ստալինի ուսմունքը: Ընկեր Ստալինի անընկճելի, անխորտակելի կամքի մեջ, նրա՝ կոմունիզմի համար մարտնչողի անհողողդ խիղախության մեջ, պրոլետարիատի դործի հանդեպ նրա ունեցած անսահման անձնվիրության մեջ մարմնացած են բանվոր դասակարգի հղորությունն ու կամքը, դասակարգ, վորը կոչված ե ազատադրելու ճնշվող ու շահադործվող ամբողջ մարդկությանը:

Ընկեր Ստալինը սոցիալիստական հնդամյակների վողեշնչողն ու կազմակերպիչն ե, սոցիալիզմի համաշխարհային—դատմական հաղթանակները վողեշնչողն ու կազմակերպիչն ե: Շարունակելով Լենինի դործը, ընկեր Ստալինը դարգացնում ե առաջ ե տանում մարքսիզմ—լենինիզմի թեորիան, հարստացնում ե մարքս—լենինյան դիտությունը հասարակության դարգացման մասին, դիտությունը բանվորական շարժման մասին, դիտությունը պրոլետարական հեղափոխության մա-

սին, դիտությունը կոմունիստական հասարակության կառուցման մասին: Ընկեր Ստալինը, շարունակելով ե խորացնելով Մարքսի—Ենդելսի—Լենինի ուսմունքը պետության մասին, մշակեց դիտությունն Խորհուրդների հանրադեպության—բանվորների ե գյուղացիների սոցիալիստական պետության մասին, բանվոր դասակարգի դիկտատուրայի մասին սոցիալիզմի հաղթանակի եպոխայում յերկրի մեկ վեցերորդ մասում: Ընկեր Ստալինը հանճարեղ կերպով մշակեց ե խորացրեց լենինյան թեորիան սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին մեկ յերկրում, պաշտպանելով սպորտունիստների ե բոլոր մյուս թշնամիների դեմ միաժամ կատաղի մարտերում լենինյան ուսմունքը: Լենինի համիասին ընկեր Ստալինը հանդիսացել ե Խորհրդային Միության ժողովուրդների մեծ բարեկամության մեջ մարմնացած ազդային հարցի վերաբերյալ բոլշևիկյան թեորիայի ստեղծողը: Չարգացնելով Լենինի դործը մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին, լենինյան կոոպերատիվ պլանը, ընկեր Ստալինն այդ հիման վրա ծավալեց կապիտալիստական տարրերի վրա ամբողջ Փրոնտով հարճակում դործելու հանճարեղ պլանը, մշակեց կոմունիստական հասարակություն կառուցելու ձևերն ու ուղիները: Ստալինն ամենաարժեքավոր ավանդ մտցրեց մարքս—լենինյան թեորիայի մեջ, մշակելով բանվոր դասակարգի դեկավորությամբ գյուղացիության բռնելիք ուղու վերաբերյալ, գյուղատնտեսության կոլեկտիվացման պայմանները ու մեթոդների վերաբերյալ հարցը: Ընկեր Ստալինն առաջ քաշեց համատարած կոլեկտիվացման բազայի վրա կուլակությունը վորպես դասակարգ վիզվիդացիայի յենթարկելու լողունդը:



Ընկեր Ստալինը զարգացրեց և հարստացրեց բան-  
ալոր դասակարգի ղեկավարության սխեման՝ կուսակ-  
ցութեան դերի վերաբերյալ ուսմունքը, փայլուն կեր-  
պով մշակելով բանվոր դասակարգի ստրատեգիան ու  
տակտիկան: Ստալինը զարգացրեց և շարունակեց բան-  
ալոր դասակարգի և կուսակցութեան մեջ դոյուլթյուն  
ունեցող ուղղաօնիստական հոսանքների սոցիալական  
արմատների լենինյան վերլուծութիւնը, ցույց տվեց  
ուղղորտունիզմի հիմնական արտահայտումները դասա-  
կարգային սլայքարի տարբեր ետապներում:

Ընդհանրացնելով պրոլետարական հեղափոխու-  
թեան սլայքարի ամբողջ փորձը և սոցիալիստական շի-  
նարարութեան փորձը, ընկեր Ստալինը բոլոր չրջա-  
դարձային ետապներում առաջ է քաշել և առաջ է քա-  
շում կուսակցութեան ղեկավար, դործուն լողունդներ,  
հասնելով նրանց կատարմանը: Պայքարի կարևորա-  
դույն ետապներում ընկեր Ստալինը սլայքարի հենց  
այն ձևերն է անսխալ նշում, վորոնք ամենից շատ են  
հեշտացնում մասսաների մորիլիզացիան:

Ընկեր Ստալինը շարունակում է Լենինի դործը,  
դադարաբար պես գիտնելով և համախմբելով բոլշևիկյան  
կուսակցութիւնը, տանելով նրան հաղթանակից հաղ-  
թանակ:

Նրա «Լենինիզմի հարցերը» գիրքը, ստալինյան  
հանձարեղ աշխատանքը «Քաղաքացիական պատերազ-  
մի պատմութեան» վրա, «ՀամԿ(բ)Կ պատմութեան»  
(համառոտ դասընթաց) վրա, հոդվածներն ու յե-  
լույթներն ամբողջ աշխարհի քոլչևիկներին գիտում են  
մարքս-լենինյան թեորիայի սուր զենքով: Ընկեր  
Ստալինի յելույթներն ու ցուցումները կարևորագույն

ազդեցույց են հանդիսանում իդեոլոգիական ճակատում  
աշխատելու համար, մարքսիզմ-լենինիզմին թշնամի  
բոլոր թեորիաներն ու կապիտալիզմի մնացորդները  
մերկացնելու համար:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան-մարտյան պլե-  
նումում (1937) տված իր զեկուցման մեջ ընկեր Ստա-  
լինը մերկացրեց տրոցկիստների ու բուխարինականե-  
րի Ֆաշիստական եյուլթյունը, կուսակցութիւնը մորի-  
լիզացիայի յենթարկեց տրոցկիստական-բուխարինա-  
կան յերկերեսանիներին, լրտեսներին, վնասարար-  
ներին, մարդասպաններին և դիվերսանտներին արմա-  
տախիլ անելու համար: Ընկեր Ստալինի առաջ քաշած՝  
բոլշևիզմին տիրապետելու և քաղաքական անհոգու-  
թիւնը լիկվիդացիայի յենթարկելու լողունդն է՛լ ավե-  
լի բարձրացրեց կուսակցութեան զդասութիւնը,  
բարձրացրեց նրա մարտունակութիւնը թշնամի կապի-  
տալիստական դասակարգերի մնացորդներ զեմ, կա-  
պիտալիստական չրջապատման դործակալութեան դեմ  
մզլող սլայքարում:

Ընկեր Ստալինը խորհրդային ժողովրդին շարու-  
նակ հիշեցնում է կապիտալիստական չրջապատման  
մասին, մորիլիզացիոն պատրաստակալութեան մեջ  
մնալու անհրաժեշտութեան մասին: Ընկեր Ստալինը  
վիթխարի աշխատանք է տանում Բանլորա-դյուզա-  
ցիական Կարմիր Բանակի և Ռազմա-Մովային նալա-  
սորմի հետադա ամրապնդման ուղղութեամբ, վորոնք  
պատրաստ են ուղած մոմենտին կործանիչ հակահար-  
ված տալու նրանց, ովքեր կիործեն հարձակիլ մեր  
մեծ հայրենիքի սրբազան սահմանները վրա:

1929 թվի դեկտեմբերին, յերբ լրացալ ընկեր



Ստալինի 50 տարին, աշխարհի բոլոր ծայրերից վող-  
ջույնի և շնորհալուրանքի հեռադերք յեկան ընկեր  
Ստալինին: Ընկեր Ստալինը բոլորին այդ վողջույնների  
առթիվ պատասխանեց.

«Կարող եք չկասկածել, ընկերներ, վոր յես պատ-  
րաստ եմ այսուհետև ևս բանլոր դասակարգի դործին,  
պրոլետարական հեղափոխության և համաշխարհային  
կոմունիզմի դործին տալու իմ բոլոր ուժերը, իմ բոլոր  
ընդունակությունները և, յեթե հարկ լինի, իմ ամ-  
բողջ արյունը, կաթիլ առ կաթիլ»:

«Ստալինն—այդ Լենինն է այսոր»,—պարզ և հրա-  
շալի կերպով ասաց Հանրի Բարբյուսը, և այդ խոսքե-  
րը կրկնում են ամբողջ աշխարհի ժողովուրդները:

Ստալինն ամբողջ աշխարհի աշխատավորության  
սիրելի առաջնորդն է: Խորհրդային ժողովուրդը լեցուն  
է անհուն նվիրվածությամբ դեպի ընկեր Ստալինը:  
Ամբողջ խորհրդային ժողովուրդն ընկեր Ստալինին  
ընտրեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի առաջին դեպու-  
տատ: Միութենական և ինքնավար հանրապետություն-  
ների բոլոր ժողովուրդներն ընկեր Ստալինին ընտրե-  
ցին իրենց դերագույն մարմինների առաջին դեպու-  
տատը:

Խորհրդային ժողովուրդն Ստալինի մեջ տեսնում է  
իր հերոսական դժերի, կոմունիզմի հաղթանակի հա-  
մար պայքարելու իր աննկուն կամքի մարմնացումը:  
Անասան է սիրելի առաջնորդ, բարեկամ և ուսուցիչ  
ընկեր Ստալինի շուրջը համախմբված խորհրդային ժո-  
ղովրդի բարոյական-քաղաքական միասնությունը:  
Ստալինը—դա խորհրդային մեծ ժողովրդի անհաղթա-  
հարելիության սիմվոլն է:

«Մեր յերկրում ժողովրդի բարոյական-քաղաքա-  
կան միասնությունը,—նչէլ է ընկեր Մոլոտովը,—ունի  
նաև իր կենդանի մարմնացումը: Մենք ունենք մի  
անուն, վորը դարձել է սոցիալիզմի հաղթանակների  
սիմվոլը: Այդ անունը միևնույն ժամանակ խորհրդային  
ժողովրդի բարոյական և քաղաքական միասնության  
սիմվոլն է: Դուք գիտեք, վոր այդ անունը—Ստալին  
է »: (В. М. Молотов, К двадцатилетию Великой  
Октябрьской Социалистической революции. Сбор-  
ник, стр. 23).

«Ազգային գրադարան



NL0185784





9522 10 4.

**И. В. СТАЛИН**

(Краткий биографический очерк)

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1939